Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

564

[illegible]

1953. 608

[illegible]

[illegible]

[illegible]

# ՈՂԲՔ

## ԵՒ ՀԱՌԱՉԱՆՔ

## 'Ի ԴԻՄԱՑ ՄՕՐՍ ՄԵԾՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ

*Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց Այցելուի, Որդւոյ Տարսայիճ Իշխանի, ըստ խնդրոյ Վարդապետին Խաչատրոյ Կեչառեցւոյ ի ՉԽԸ թուին մերոյ ։*

3347

'Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՅ ՏՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՈՒՐԷՆԵԱՆՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ ։

'Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
'Ի ԿԱԼԿԱԹԱ
1846



Հերի՛ք լաւ Մա՛յր՝ մեր հոգւոյ ,
Զի ՏԷՐ է քոյ՝ Թագաւոր .
ԿԱՅՍՐՆ պաշտպան Ամենողորմ .
ՆԵՐՍԷՍ , փեսայ փառաւոր .

# ՈՂԲՔ

## ԵՒ ՀԱՌԱՉԱՆՔ

Ողբ տաղաչափ, և յայն աշխարհական լա-ցեալ անհուն հեծեծանօք վասն աւերման աշ-խարհին Հայոց և բնաւին սպառելոյ Հայ-րապետութեան և թագաւորութեան համա-գունդ իշխանութեամբ: Շարեալ չափա-բան բերմամբ՝ Հոմերական արուեստի 'ի Ստե-փաննոսէ Սիւնեաց Ասցէլուէ. 'ի խնդրոյ Շնորհազարդ Վարդապետին Խաչատրոյ Կէսարացւոյ:

## ՁԱՅՆ ԲԱՐՁՐԱԳՈՒԺ ԵՒ ԱՀԱԳԻՆ

*նըման օձոյ՝ որոտա ցին*
*Կանչի՛ն ահեղ՝ և սաստկագին*
*Գայ 'ի վայրէ՝ Արարա տին*

Սնու զաշխարհ՝ բոլորո վին ·
Զօրէ.քծագրեան տեխեղե րին ։
Բախէ զականջս՝ Ադամա ծին ·
Բոլոր ազանցըս մարդկա յին ։
Թափէ զխելս՝ ամենայ նին ·
Եւ սրտաբեկ՝ առնէ զնո սին ։
Շարժէ 'ի յողբ՝ անհընա րին ·
Եւ յարտասուս՝ կսկըծա գին ։
Տայ հառաչել՝ հեծեծա գին ·
Կական բառնալ՝ յոյժ ցաւա գին
Կոչէ 'ի սուգն՝ խոր վշտա գին ·
Երթալ 'ի գոյժ՝ աղաղա կին ։
Լինել կըցորդ 'ողբոցնո րին ·
Վայ և եղուկ՝ կարդալ նը մին ։
Արդ ընդ ձայնիս՝ այս մահա ծին ·
Պակեան լսօղք՝ հանուրց ազ գին ։
Զարթեն 'ի քնոյ՝ մահաբե րին ·
Փոյթ և ըշտապ՝ ընթանա յին ։

Խուռնեալ ամբոխք՝ կարաւանին.
Խիտ զմիմեանց՝ հետ կոխ էին ։
Յարամանեան՝ տունն երթայ ին ·
Դարարատեան՝ դաշտըն ը ցին ։
՚Ի Նոր քաղաք՝ Հայոց հա սին ·
Այն որ Վարդգէս՝ կոչիւրնաւն կին ։
Որ և Վաղարշ՝ Արշակու նին ·
Ընդարձակեալ՝ զծիր պարս պին ։
Դնէ ՚ի նմա՝ զիւր արքու նին ·
Փոխէ յանուն՝ իւր ըզան գին ։
Տեսին ՚ի նմա՝ զարքայու հին ·
Զայն երկնաւոր՝ Թագաւո րին ։
Ո խորան փառաց՝ տեառն Յս̄ին ·
Զմայրն լուսոյ՝ Հայկայ զար մին ։
Մերկ խայտառակ՝ ՚ի բաց հա նին ·
Զանձամբ արկին քուրձ խաւարին ։
Հերքըն ձողեալ՝ որպէս կընդէին ·
Ստինքն ցամաք՝ զերդ ըսկընդ կին ։

Օ՜ կուրծն բախէր՝ քաջիմբ ուժգին
Ատուք արեանց՝ իջան էին ։
Մոխիր կուտէր՝ Ներման բըլ րին .
Ցանէր ձեռամբն՝ ՚ի գագա թին ։
Երամք կանանց՝ ճըչօղ լա յին .
Շուրջանակի՝ զնա պար էին ։
Գուսք երգողաց՝ կանգնեալ կային
Զգամբանական՝ փողն ած էին ։
Ըստաղական՝ ողբովք լա յին .
Զգալարափողըն՝ հընչ էին ։
Աչեաքն շիւանս՝ մեծ քաշ էին .
Կէսք ըզվարսից ըն փետ էին ։
Ըհա հարցուկ՝ Ներմա յն նին .
Եկեալքն ՚ի ձայն՝ աղաղա կին ։
Ըյս ծուռ՝ այս ծուռ ձիչս ահագին
Գոչիւնս ահեղ՝ Ներման ամ պին ։
Ըյս ծիլ, այս ծիլ՝ ՚ի բազմո ցին .
Ներման մեծի՝ արքայուհին ։ (րին

Այս ինչ այս ինչ՝ սուգ անհնա -
Որ ո՛չ եղեալ՝ և ո՛չ լինելին ։ (րին
Պատասխանէ՝ մեծ Թագու հին ․
Բանայ զբերան՝ ըն ցաւա գին ։
Յոգւոց հանէ՝ խորոց սըր տին ․
Զծուխըն ցնդէ՝ թանձր յըռընդին ։
Այս ես՝ այս ես՝ Նջ.ք Մխած նին ․
Իմ կուսածին՝ Թագաւո րին ։
Որ հարսնացեալըս՝ էի նը մին ․
'Ի յաշխարհիս՝ Թորգոմա ծին ։
Երբեմն էի՝ որպէս զեր կին ․
Այժմ հաճաար՝ եմ գըռե հին ։
Երբեմն արև՝ արփիա ծին ․
Այժըմ խաւար՝ անհընա րին ։
Երբեմն Թագ՝ կապեալ ձե ռին ․
Անեղ բազկայն՝ իմ Յիսու սին ։
Այժմ անպիտան՝ նըման աղբին ․
Եղեալ կոխան՝ չորքոտան ւոյն ։

Երբեմըն հարսն· յառագաստին
Մուծեալ գրկօք՝ իմ փեսայ ին ։
Այժմ եմ սեղելո՝ օտարո տին·
Անպէտ նըման՝ հոսեալ ջը րին ։
Իսկ այս որ շուրջ՝ զինև պարին·
Են իմ դստերքն՝ որք նախ ելին ։
Օրս աստ և անդ՝ հարսնացուցին·
Եկեղեցիք՝ Հայաստա նին ։
Փառավեցաք՝ 'ի միա սին·
Լընուլ ողջովք՝ զաշխարհ ընածին·
Արդ՝ դուք ականջ՝ դի՛ք իմ բանին·
Լուարուք զաղէտս՝ իմ վշտագին ։
Կոչեմ և աստ՝ զօրսըն վե րին·
Ձայն արձակեմ՝ 'ի վեր յեր կին ։
Օ ի զան 'ի վայրն՝ իմ'ի սորին·
Խառնին ընդ ազգ՝ ըդ երկրածին ։
Լսել զպանդասոս՝ իմ դառնագին·
Զոր աղէտիցս՝ իմ կըցոր դին ։

Ողբան և լան՝ ըստ արժանւոյն ·
Անբաւ վայլուք՝ ինձ ախտակցին ։
Զի թէ միոյ՝ վասն ոչխա րին ·
Սուգ է նոցա՝ անհընա րին ։
Ապա քանի՝ անթիւք է ին ·
Որք առ ինեւ՝ կորեան ընա ծին ։
Լուր ինձ երկին՝ և դասք վերին ·
Մնա դնիր երկնիր՝ և որ ՚ի սրմին ։
Ես թագաւոր՝ էի նախ կին ·
Բարձր և հըզօր՝ անպարտե լին ։
Կանգնել յաշխարհս՝ Ասքանազին ·
Տիրեալ ազգաց՝ ճագանց սո րին ։
Ի դրանից հոնաց՝ և կովկա սին ·
Ուր ծով կազբից՝ է և խազ րին ։
Մինչ ՚ի ստորին՝ կողմըն գամիրին ·
Եւ կոկիսոն՝ հաստ սահմա նին ։
Ի պոնդոսէ՝ հիւսիսայ ին ·
Մինչ ՚ի Վրկանըն պարսկայ ին ։

Արեգակունք՝ առխ կայ   ին․
Պայծառ ճահեղ՝ քան զըղզալին ։
Շնորհն անմահ՝ քահանայ   ին․
Պատիճըն մեծ՝ թագաճո   րին ։
Փեսայն Ձեմէր՝ յառագաս   տին․
Հանգչէր ընդխ՝ մինչ յանկողին ։
Որընայ ուղխ՝ գեղեցկա   ծին․
Նաւ դըստեր՝ ըս լուսա   ծին ։
Ո օրք իմ անթիճ՝ առխ կային․
Որպէս օրէն է արքայ   ին ։
Զայնք պաշտամանց՝ յիս հընչէին․
Նըման վերնոց՝ լուսեղէ   նին ։
Տօնք տարեկանք՝ յիս խըմբէին․
Անհամեմատ՝ ազգ մարդկայ   ին ։
Գետք իմաստից՝ յիս բղխէ   ին․
Նըման Դըկլաթ՝ և Եփրա   տին ։
Պայծառազարդ՝ խրախանայ   ի․
Ես իմ մանկամբըն՝ դեռա   ծին ։

Յանկարծակի՝ դիպայ չա րին․
Որ չէ եղեալ՝ յազգ մարդկային ։
Իմ թագաւոր՝ այն երկնայ ին․
Ցիս հայեցաւ խեթիւ խո րին ։
Եւ իմ գլխոյս՝ ետ կընդու թիւն․
Զթագըն յերկիր՝ ընկէց օտա րին ։
Երեգակունք՝ որք յիս կայ ին․
Խաւարեցան՝ ամենև ին ։
Փեսայն այրի՝ թողեալ բնա ծին․
Հալածեցաւ՝ յաշխարհ օտա րին ։
Որդեակն իմ սէգ՝ Արշակու նին․
Որ անդրանիկն՝ էր և նախ ծին ։
Ո՛ թշակն էառ՝ մահու յե տին․
Վախճանեցաւ՝ ՚ի գիրկ ծընո ղին ։
Ո՛ Արտաշխէ՝ ասեմ վերջին․
Որ ած խաւար՝ Հայոց ազ գին ։
Բայց միւս ես այլ՝ կայր նորածին․
Զոր զգուշութեամբ՝ սնուցանէ ին ։

Մ՝խիթարէի՝ ես զիս ինք նին ·
Մեծ պարծէի՝ յուսով նո րին ։
Որ 'ի տանէն՝ էր Յուդայ ին ·
Գգուեալ անուամբ՝ Բագրատունին
Աճաղ ժիշմանս՝ այս երկրորդին ·
Որ զիս խոցեաց՝ անհընա րին ։
Անբուժելի՝ վիրօք վեր ջին ·
Որ սպեղանեօք՝ ոչ բըժըշ կին ։
Որք զարգացեալ՝ յարքունս հասին
Ցարքունական՝ աթոռ նըս տին ։
Օ՜ թագ արքայից՝ այն առաջ ին·
Որպէս պըսակ՝ 'ի գլուխ ե դին ։
Եւ՞ զիս սակաւ՞ կազդուրե ցին ·
Թէպէտ սուխ՝ ոչ օթե ցին ։
Քանզի աթոռ՝ նոքա ար կին ·
'Ի Շիրակայ՝ տանն 'ի յԱ նին ։
Յերազգաւոր՝ մեծ աւա նին ·
Նաև 'ի կարսըն վանան դին ։

Տիրեալ Վըրայ՝ և Աղուա՛ն   նին·
Հայոց բոլոր՝ մինչ յԱսո   րին:
Որոց Աշոտն՝ էր Առա   ջին·
Ապա Սըմբատ՝ որդի նո   րին:
Որ վըկայեաց՝ ՚ի մեծն Դը   վին·
Կախեալ զփայտէ նըման Փըրկ   չին:
Յետ որոց այլք՝ ՚ի նոյն կար   գին·
Որդիք ընդ հարցն՝ յաջորդ   էին:
Մինչ ՚ի Գագիկ՝ բնաւ՛ից վերջին·
Որ գնաց անդարձ՝ յաշխարհ Յունին:
Օ՜ որ և անդէն՝ խիղ կորու   սին·
Զարաբարոյ՝ ազգ Հոռո   մին:
Ո՜հ կորեայ՝ բոլորո   վին·
Մնեալ ՚ի սուգ դառն և ուժ   գին:
Ո՞ւր է որդին՝ իմ՛ նախա   ծին·
Արշակունի՝ տունն առա   ջին:
Կամ՛ ո՞ւր կըսերն՝ զինի նո   րին·
Բագրատունի՝ տունըն վեր   ջին:

Ո՞ւր են փեսայքն՝ և փառք նոցին
Պատրիարգունքն՝ Հայոց ազ գին ։
Որք մինչ ցովսէփ՝ Հողոցե ցին .
Ցիմ սենեկիս՝ հանգչեալ կա յին ։
Ապա ՚ի գոճին՝ չոճեալ գնացին .
Բանիւ սրբոյ՝ Ջօրապե տին ։
Վ արդանայ մեծ՝ Մամիկո նին .
Սպարապետին՝ Հայոց սպա յին ։
Օ գուտ ընտրեցին՝ գերանե լին .
՚Ի սուրբ Գրիգոր՝ ըն նստու ցին ։
Մինչ ՚ի ցովհան՝ նէս գաւռնե ցին .
Կային անդէն՝ ՚ի նոյն տե ղին ։
Բայց անտի աստ՝ զիս խնա մէին .
Որպէս օրէն՝ է ծընո ղին ։
Իսկ զօրանալ՝ Իսմայէ լին .
Սրբոյ ձեռին՝ Հագարա ծին ։
Եղեալ երկփեղկ՝ տունս Արա մին .
Ձեռամբ Յուսփայ՝ անխծե լոյն ։

Ճեղքեալ յերկուս՝ թագաւորին
Բագրատունեաց՝ և Արծրու նին ։
Գագիկ որդին՝ ոյն դերեն կին ·
կալեալ իւր թագ՝ դէմ Սմբատին ։
Որ և կորուստ եղև բնա ճին ·
Հայոց ցեղին՝ բոլոր վին ։
Աթոռք բազումք՝ անկան էին ·
Տունք ճապարանք՝ կործան էին ։
Իշխանք անհետ՝ կորընչ էին ·
Ազգօք իւրեանց՝ ջնջեալք եղծին ։
Ազատորեան՝ ՚ի բաց եղ լին ·
՚նըման ծըխոյ՝ ըսպառ էին ։
Եկեղեցիք՝ քանդեալք լի նին ·
Եւ յաճարի՝ հարեալք զե րին ։
Գեղք և աւանք՝ աւեր էին ·
Քաղաք և բերդք՝ տապալ էին ։
Սակաւ աւուրբք՝ ՚ի բաց ջընջին ·
Անյայտ որ նիշ՝ բնաւ չէր ևին ։

Բոլոր գաւառք՝ Հայաստա նին․
Որպէս խանձողք՝ զերծեալք՚ի հրոյն
Ճանցուր անցորդք՝ Ճանապարհին․
Տեսեալ ըզգլուխ՚սըն շարժ էին ։
Օ արմանք ըզմիտ՝ ըմբռնէին․
Ճըչեալ ՚ի բաց՝ անցեալ գնային ։
Իսկ սինլիքորք՝ Բագրատունին․
Թէպէտ սակաւ՝ ամօք կա ցին ։
Այլ ջախջախեալ՝ եղէգն էին․
Բեկեալ կենօք՝ տատա նէին ։
Ընդ որ հայրապետքըն շրջէին․
Ալէկոծեալք՝ այսր անդր յածին․
Մ՚ինչ ՚ի վահրամ՚Պալհաւու նին ։
Ձոր Գրիգորիս՝ յորջորջէ ին ։
Որդի մեծի՝ Մագիստր սին․
Գրիգոր մարզպան՝ և Վկտօն դին ։
Պռօտոն սպաթար՝ և կըռընդին․
Հայոց մեծաց՝ Սևաստա սին ։

Սա ցանկացեալ՝ զլոյս իմաստին․
գնէ տեղապահ՝ զԳորգ Ծերունին ։
Չուէ յաշխար՝ ըն վասա ծին․
Մտեալ ՚ի քաղաքն՝ Ըստամպօլին ։
Թարգմանութե՝ յամել ՚ի նըմին
գտանայր այսրէն՝ յիւր Հայրենին։
Լուեալ զաւուումն՝ իւր քաղաքին․
՚ի ձեռըն պիղծ՝ Ալփասլա    նին ։
Օ տուննախադահ Բագրատունւոյն
ԶԱնի քաղաք՝ ըն Շիրայ    ին ։
Գ․ընայ ՚ի տուն՝ մեծ իշխա    նին․
Որ Գող Վասիլըն կոչէ    ին ։
Բնակէ ՚ի մեծ՝ մենաստա    նին․
Զոր Կարմիր վանք՝ յորջորջէ ին ։
Կոչէ առինքն՝ զիւր ազգայ    ին․
Ըզ տէր Բարսեղ՝ Ճոխն և ա րին․
Օ որ իւր կամաւ՝ ձեռնադրե ցին ։
Յարհիական՝ տան Հաղբա    տին․

Գնացին այլ ոչ՝ դարձան ընաւին
Քանզի անդէն՝ զվաղճան առ ին ։
Իսկ Թագաւորքն՝ որք աստ կային
Գագիկ որդին՝ այն Աշո տին ։
Եւ միւս Գագիկ՝ ըն Կարը ցին ·
Որպէս զըստուեր՝ Նոքա ան ցին ։
Խաբկանօք՝ այն պիղծ ազ գին ·
Առ Թագաւորն՝ Յունաց գնա ցին ։
Զմին ՚ի կղզի՝ ձգեալ կորուսին ·
Ծիւսոյն ետուն՝ զերդ ծամընդլին ։
Զոր և յետոյ՝ խեղդեալ սպանին ·
Ձեռամբ որդւոյ՝ Մանտալէ ին ։
Բայց միւս Գագիկ՝ Վանանդեցին ·
Վախճանեցաւ՝ ՚ի Նըմին ա մին ։
Թողեալ ժառանգ՝ իւրոյ Թագին ։
Սենեքարիմ՝ քաջ և ա րին ։
Որ և տուեալ՝ ըզ հայրե նին ·
ի ՚ի խոժէնն՝ արքայ Յու նին ։

Ոռնու փոխան՝ Հայրիկ պտտոյն
Եւ ըղձեւատ՝ քաղաք ընդ Նորին ։
Ոնդէն եւ անդ՝ Նոքա մնա ցին ·
Առ ժամանակ՝ մի փայլե ցին ։
Յետոյ երագ՝ եղեն բնա ճին ·
Ջարթուցելոց՝ ՚ի քնոյ մահ ձին ։
Բայց միւս եւս այլ՝ մեզ ջահ լուցին ·
՚Ի տան Բագրատ՝ Ալխակա Նին ։
Սմբատ սեպուհն՝ այն մեծազգին ·
՚Ի Հայկազանցն՝ այն առա ջին ։
Որոյ բազուկ՝ Հայոց Ազ գին ·
Բարձր եւ հզօր՝ անպարտե լին ։
Թագաւորեալք՝ Թագ կապեցին ·
Ուժգին եւ խրոխտ՝ ընդդէմ չարին
Որուրբք բազմօք՝ ՚ի յետ անցին ·
Ընդ Թագաւորս՝ Բագրատունին ։
Հայրիկ եւ քան՝ ամք յաճելին
Վասն ամրութեն՝ այնմ աշխարհին

Որոյ վերջին՝ Սենեքա րիմ·
Նաև Գրիգոր՝ որդի Նոր ին ։
Ապա և զայս՝ ՚ի բաց բար ձին ·
՚Ի ժամանակս՝ Եղոբկու զին ։
Ազգն այլասեռ՝ և պարսկա յին ·
Որք հրով զաշխարհ՝ տոչորե ցին ։
՚Ի վեց հարիւր՝ մեր թուականին ·
Եւ տասն և հինգ՝ յաւելուածին ·
Ահա սոքա՝ այսպէս ան ցին ·
Բնաւին ՚ի բաց՝ եղծեալ գնա ցին ։
Որպէս զըստուեր՝ այլ չերևին ·
Նման երազոյ՝ կարծեօք թուէ ին ։
Որպէս ծաղիկ՝ յամառայ նին ·
Արևակէզ՝ թարշամե ցին ։
Որպէս սաղարթք՝ վարսեալ ծառին
Խորշակահար՝ ցամաքե ցին ։
Որպէս զանտառ՝ Լիբանա նին ·
Ջարդ և զօսն՝ և զնոճ սարին ։

Տապարահատ՝ կործանե ցին ·
Սուրբ անխընայ՝ խամայել ին ։
Արդ ո՛չ ևս է՝ ո՛չ երև ին ·
Անցեալք նըման՝ խոտոյ նանրին ։
Մ՛իայն այրի գլխ աստ թո ղին ·
Որպէս գոչիւնչ՝ ի բաց լը քին ։
Արդ մնացեալ՝ յանկայր դաշտիս
Ջերդ ըղձագան՝ անապա տին ։
Օ՛ աչերս աճեմ՝ կողկողա գին ·
Ձայն արկանեմ՝ ողորմա գին ։
Ո՛ւր էք որդի՛ք՝ խմորքա ծին ·
Եկա՛յք առ մայր՝ըս ձեր նախկին ։
Որպէս օրէն՝ է զաւա կին ·
Տանիլ խընամ՝ ծեր ծընող ին ։
Ամնեւին՝ ինձ չերև ին ·
Բայց թէ ողնի՛ք՝ ընդ Հագարին ։
Կամ Սկիւթայի՝ Հօրանք Թուրքին
կամ խայտառակ՝ մանկունք նոցին

Որք միշտ կոխան՝ զիս առնէ ին ·
Տեղի չարեացն՝ որ գործէ ին ·
Ահա՛ վայ ինձ՝ բլուրք ընդ բլուրին
Անհուն եղուկք՝ ի յիս կուտ ին ·
Տեսէք զիմ՛ փառքըն զառաջ ին ·
Տեսէք զվերջին՝ նախատս անձին ·
Թէ ջուր էի՝ ջուր ընկե ցին ·
Ցերեկնից յերկիր՝ զիս իջու ցին ·
Խորք անդնդոց՝ զիս ծածկեցին ·
Որ այլ չունիմ՝ յոյս փըրկո ղին ·
Ո՞ւր են փեսայքն՝ իմ՛ առա ջին ·
Հայրապետաց ջոկքն՝ որ ան ցին ·
Ո՞ւր թագաւորքն՝ իմ՛ են նախկին
Ո՞ւր են ազատքն՝ ընդ սեպուհին ·
Ո՞ւր են իշխանք՝ դահադըլ խին ·
Նախարարաց կոյտք՝ որ կա յին ·
Ո՞ւր զօրութիւնք՝ բիւր բանակին ·
Խուռնեալ ամբոխ՝ անթուե լին ·

Ո՞ւր բարունիքն՝ որ յիս կա յին ·
Պատք երկնից՝ կղերիկո սին ։
Ո՞ւր սարկաւագքն՝ յիմ բագրոնին
Ո՞ւրեն դըպիրք ՚ի տաճա րին ։
Ո՞ւր ընթերցողք՝ անագա նին ·
Ուր են փըսալոք՝ որք երգէ ին ։
Ո՞ւր իմ հանդերձ՝ լակոնա ցին ·
Հըղաշատեան՝ և ծիրա նին ։
Ո՞ւր են կերպասքն՝ ընդ բեհեզին ·
Եւ կապուտակք՝ ըն հընդկա յին ։
Ո՞ւր են ճամուկքն՝ ընդ կամարին
փողեալ ոսկով՝ ընդ մարգարտին ։
Ո՞ւր ծամնակալք՝ ընդ սափերին ·
Ուր վարսակալք՝ ըն կեփա գին ։
Որք ՚ի համակ՝ ոսկոյ լի նին ·
Ցեւեալ ակամբք՝ մեծագը նին ։
Այծ կարկեհան՝ ընդ շափիւղին ·
Կարմիր ակունք՝ սարդիո նին ։

Ո՞ւր պահանջանքն՝ իմոյս բազկին
Խապարանջանքն՝ իմոյս ոտ ին:
Ո՞ւր ձայն երգոյ՝ պաշտօնէ ին.
Ո՞ւր և բուրմունք՝ անոյշ հոտին:
Ո՞ւր կանթեղունք՝ լուցեալ ջահին
Նման աստեղաց՝ որ ՚ի յեր կին:
Ո՞ւր են զենմունք՝ սուրբ խորհրդին
Որ միշտ ատխ՝ կատարէ ին:
Ո՞ւր հաշտութիւն՝ առ Արարչին
Որով փրկեալ՝ աշխարհ լի նին:
Արդ զո՞ր կարեմ՝ ըստ պատշաճին
Թուէլ զիմ փառսն՝ որ նախ էին:
Նըման հողմոյ՝ յիս շնչէ ցին.
Անհետ ՚ի բաց՝ անցեալ գնա ցին:
Բայց ո՜վ տեսօղք՝ իմոյս անձ ին.
Լըսօղք բանիցս՝ իմ ցաւու գին:
Դուք ողբացէ՛ք՝ զիս վշտա գին.
Զ.ցայգ և ցերեկ՝ անհընար ին:

Ա՜յ տուք գըլխոյս՝ բոլորովին ·
Եղո՛ւկ անձինս՝ ամենև ին :
Օ՜ այս ո՛վ տեսեալ՝ կամ ո՛վ լինին
Որ պատահեաց թշուառ ան ձին :
Ողբացէք՝ զիս սաստկա գին ·
Աշխարեցէք՝ ողորմա գին :
Ածէք աւխ՝ զանսօղըն հին ·
Զերեմիաս՝ նեղկեա ցին :
Հանգերձ պարու՝ մարգարէ ին ·
Խորայերեան՝ հընոյ ցե ղին :
Որք են հըմուտ՝ լալոյ բա նին ·
Զի ընաւէ՛ի ոգոյ՝ չդադարէ ին :
Ո՞ւ է թէ ողբան՝ ըստ պատշա ճին ,
Զահեղ կորուստ՝ իմոյ զար մին :
Ո՞վ զգըլուխս՝ առնեն ընաւէին
Զաչերս աղբիւր դառն արտասուին
Որդան ողբովք՝ անհընա րին ,
Զիմ՛ ճանապարհս՝ որ սուգ առին

Ո՛ճաղ ամեն՝ քեզ քա՛ղաք Հին ·
Տո՛ւն և աթոռ՝ Երկնաւոր րին ։
Ընդէ՞ր այդպէս՝ եղեր սուտ րին ·
Նըման խըղըց՝ մըգապա Հին ։
Պարտէզ ճայգի՝ քակեալ յանդգնին
Ապականեալ՝ խոզից շամ բին ։
Փոխան զօրաց՝ ըն Հրեղէ Նին ·
Հրեշտակ.ք չարին՝ 'ի քեզ պարին ։
Փոխան ձայնի՝ սրբերգե Նին ·
Գեհ՜.ք և ոզնիք՝ քեզ կա.քա ճին ։
Փոխան բուրմանց՝ ըն Նարդոսին ·
Աղբ.ք և ա՜խիշ.ք 'ի քեզ կու տին ։
Փոխան սըրբոց՝ պաշտօնէ ին ·
Յուշկապարիկ.ք 'ի քեզ բնա կին ։
Փոխան զենմանց՝ պարարա կին ·
Հօրանք այծից՝ 'ի քեզ բու նին ։
Ո՜յ վա՜յ քեզ վա՜յ՝ որ չվճարին ·
Վա՜յ և եղո՛ւկ՝ բիւր.ք ընդ բիւրին ։

Վո՜յ զքո փեսայք՝ ըն զառաջին ․
Որ ընտան ՚ի քեզ՝ այլ չերև   ին ։
Վո՜յ զքո երէցն՝ Արշակու   նին ․
վո՜յ քո կրտսեր՝ Բագրատունին ։
Վո՜յ զքո Սիւնին՝ և զԱրծրունին
վո՜յ զՄամիկոնին՝ և զԱպուհանին ։
Վո՜յ զՀեղակայն՝ զՎանան դին ․
վո՜յ զՏարօնայն և զԾոփայ   ին ։
Վայրք քանիք՝ քեզ Հանդէպ պին
Մինչ եզր և Հառ՝ չկայ քո չարին
Վո՜յ ՚ի վերայ՝ վայեց կու   տին ․
Թող քեզ անբան՝ յաւէտե նիւ ։
Նորդ ծով դըրդերք՝ խմ նախածին ․
Ջուր և ալխ՝ ժողովե   ցին ։
Արդար ողբովք՝ անհընա   րին ․
Ջխայտառականքս՝ որ մեզ Հասին
Աստան քաղաք՝ Հայոց Դը վին ․
Անի անուր՝ ըդ Շիրայ   ին ։

Միանիք, Աղօթանք ընդ Վերային ·
Հինգ Ամարաս՝ Գրիգորի սին :
Շիրիմ սրբոյ՝ Առաքե լոյն ·
Թադէոսի՝ որ յԱրտա զին :
Հայրապետ, Բրքնի՝ Ամատու նին ·
Որ յԱրագած՝ եւ յԱնբեր դին :
Յաղօթան եւ կարս ընդ Բասենին ·
կարին քաղաք՝ Բարձր Հայ ին :
Վասպուրական՝ սուրբ վանին ·
Տարօն, Սասունք՝ Ծոփայ ին :
Եւ այլ աշխարհ՝ Հայոց սե ւին ·
Միջագետաց՝ եւ Հոռո մին :
Կիլիկիայ՝ կողմ բոլո րին ·
Պատուեալ գլխօք ըդ մեր նախկին
Թողումք զողբանք ըս ցաւագին
Առնեմք աճարտ՝ լալեաց բանին :
Յուսահատիլ՝ չէ պարտ բնաւին ·
Սեղ ՚ի յուսոյ՝ անմահ բա նին :

Որ ՚ի քարանց՝ անշնչա յին .
կանգնէ որդիս՝ Աբրահա մին ։
Այլ պաղատիլ՝ մեզ խոստա ւժգին
Գիրկս արկանել՝ ստեղծո րին ։
Օ ցայգ և զցերեկ՝ կանխել ՚ի սոյն
Արթուն ՚ի քնոյ զբաղակա նին ։
Օ ի թէ կարծէ՝ ըզ չափ չարին .
Որ մինչ ցայսօր՝ ընդ մեզ անցին ։
Առնէ վախճան՝ սրտոյս խո րին .
Զօր բազմամեայ՝ կըրեմք յանձին
Տայ նորոգում՝ըն մեզ կըր կին .
Որ բնաւ՛ չյիշեմք՝ զփառսն առաջին
Կանգնէ զաթոռ՝ Թագաւո րին .
Եւ զգաւազան՝ Պատրիար գին ։
Ամենեցունց՝ ըստ իւր կար գին .
Ուղղէ զգահոյս՝ տիրակա նին ։
Նոր զարդարէ՝ փառօք ըն հին .
Եւ առաւել՝ քան զոր էին ։

Տայ մեզ գոչել՝ ձայնիւ ուժգին ·
Վերջինս է մեծ՝ քան զառաջինն ։
Եւ մեք ամէնա՝ ՚ի միա սին ·
Տամք գոհութիւն՝ մեր փրկողին
Հօր և Որդւոյ՝ և սուրբ Հոգւոյն ·
փառք և պատիւ՝ անեղ Բա նին ։
Յաւէտ ամօք՝ որ չվճա րին ·
Այժմ և անկէտ՝ յաւիտե նին ։

—◆—

Յիշատակարան Բանին՝ ընդ անուան
Ոգւոյն :

Ախնըրդ լուսոյ ՚ի խոկըղբանէ .
Խորան փառաց՝ կանգնել յերկրէ :
Տուն Աստուծոյ՝ կաթուղի կէ .
Լուսապըսակ՝ հարսն ՚ի յերկ րէ :
Ահա քեզ ողբ՝ դու հառա չէ .
Ըստ արժանւոյն՝ որպէս պարտ է :
•Բոյին ծննդօքս՝ որ նոճագեալէ
Եկեղեցեօք՝ որ հնացեալ է :

Տողեալ տաղիւ՝ չափ յանկական
Ըստ արհեստին՝ համբրա կան .
Ստեփաննոսի՝ թըշուառա կան .
Ոգւով մեռեալ՝ և անպի տան :
Համակ կենօք՝ որպէս զան բան .
Հեղձեալ ՚ի փուշ՝ աշխարհա կան :

Շնորհաց լքեալ՝ յարփիա կան·
Գործով լըցեալ՝ եղեռնա կան ։

Երկնաքարակ՝ տանն Սիւ նի·
Որ անմնացմնոցն՝ է սըխրա լի։
Բոլոր ընա՛կից՝ ըս բաղձա լի·
Որպէս ըզդրախտն՝ Ադենայ ի ։
Կացեալ պարեկ՝ բարձր ՚ի դի տի·
Գահագըլուխ՝ յայսմ աշխար հի ։
Նըստեալ յաթոռ՝ մետրապօլտի·
Պռօտոփրոնտէս՝ Հայոց կո չի ։

Փութով մեծաճըգմեզ հարկեւ
՚ի յայս հանդէս՝ բանից մըղեալ ։
Բաբունապետն՝ հոգւով լըցեալ·
Անյաղթ հռետոր՝ շնորհօք ծաղկեւ
Եւ բանիբուն՝ մեզ ճանա չեալ·
Ցաղկաց բազմաց՝ գովաբանեալ ։
Որ խաչատուր՝ սա յորջոր ջեալ·
ՅԱրարատեան՝ տանէն ելեալ ։

Արդ պաշտօնիմ՝ ո՜վ սէ՛ր խորան
Եկեղեցեօք՝ ընդ Հայաս տան ։
Ընկա՛լ զիմ բանքս՝ ողբերգական .
Որպէս խայրիք՝ նուիրա կան ։
Օ՛ր հեռացի՛ զինուորա կան .
'ի դէմքս քո՝ խորհրդա կան ։
Թէպէտ ես գարշ՝ եմ անձնը ման .
Բանքդ 'ի շնորհաց՝ հոգւոյն ծընան

Սըրբման այրւոյն՝ խնրբեճեչին
Լումայք բանիս՝ քեզ ընծայ են ։
Կամ չքաւորացն՝ առ խորանին .
Որք մաղ միայն՝ նման մատուցին ։
Մ՛ի անարգել՝ ըստ արժա զին .
Խող համարել՝ պատարա գին ։
Ա՛յլ զինս ընկալ՝ որպէս Նոյին .
Ցընդունարան՝ քում խորհըր դին ։
Ողջոյք առ Տէր՝ ըն պաշտա տէ .
Վասն աշխարհին՝ այս մեր հայցէ .

Նուա՜ղեալ ազգիս՝ որ սպառեալ է
Նորոգութի՜ւն փութով խնդ րէ ։
Խաղաղութի՜ւն խորին շնոր հէ ·
Անշարժ յաւէտ՝ որ չսասա նէ ։
Ընդ որ և հերքայս՝ որ գերեալ է ·
Մաղթեմ չթողուլ ՚ի ձեռա նէ ։

Սահման սիրոյն՝ արարչական
Խոր և անհուն՝ անդնդանը ման ։
Տայցէ փրկանս՝ ազգի մարդ կան ·
Եւս և Ազինս՝ այս Հայկա կան ։
Նաև եղբօր՝ մեր սրբա զան ·
Խնդրող բանիս՝ Ներշափա կան ։
Ընդ որըս ինձ՝ բաշխէ փշ րան ·
՚ի սեղանոյ իւր՝ որպէս շան ։
Նմա փառ՝ ըք յաւէ տեան ·
Այժմ և յաւէտ՝ և անվախ ճան ։

## ՍՐԲՈՅ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

### Յողբոյն Եդեսիայ.

Եւ արդ առ քեզ բանիւ բերիմ
Հայաստանեայց՝ եկեղե ցի.
Յորում կաթեաց՝ շողն երկնային
Զարդըն հալեաց՝ հիւսիսայ ին.
Լոյսն անստուեր՝ ծաւալե ցաւ.
Եւ ճառագայթն՝ անճառե լի.
Սաստիկ էհար՝ ուսամբըն ոս կի.
Զայնք հընչեցին՝ ստորինս երկրի.
Ընդ հրեշտակաց՝ ըն բազմութիւք
Ցերկնից հեղան՝ ըստ հիւղէ ի.
Եւ մարդկային՝ ազգ երկրածին.
Վերասլացան՝ յեթերն երկ նի.
Որ անապատն՝ էիր վայ րի՝
Եղեր նըման՝ փըթթեալ ծաղ կի՝

Եթէ՛ կուսական՝ արեամբ ներկեալ
Գայծառացայր՝ 'ի գոյն վար    դի ։
Որդւիս ծընար՝ յա՛ճաղա    նի ·
Որքան զա՛ճաղ՝ շատ է ծո    մի ։
Պախեցուցեր՝ կաթն 'ի սու    նէ ·
Սնուցեր արեամբ՝ ըն կենդա    նի ։
Պատախարակ՝ մանկանց քա    րի ·
Տալով զօրէնն՝ ըն Մովսի    սի ։
Եթէ՛ կերակուր՝ կատարե    լոց ·
Զաճեցարան՝ ըն Քրիստո    սի ։
Յայնժամ էիր՝ երանե    լի ·
Այսու բնաւէից՝ դու ցանկա    լի ։
Երկնաւորացն՝ և երկրայ    նոց ·
Եւ կենդանեաց՝ բոլոր սե    ռի ։
Բայց հարցանեմ ով քաղցրա    լի ·
Քանզի խնդրեմ՝ պատասխա    նի ։
Այժմ ուրէ թագ՝ ըն քո զար    դի ·
Եւ կամ պըսակ՝ ըն հրաշա    լի ։

Ո՞ւր զարդարանք՝ ըն դըշխո յի ․
Հարսին որդւոյ՝ Թագաւո րի ։
Ո՞ւր պատմուճան՝ Հարսնարա նի ․
Կամ ոսկեհուռ՝ վերջաւո րի ։
Ուր չէ փեսայն՝ ՚ի խորա նի ․
Կամ փեսաւէրքն՝ ՚ի տաճա րի ։
Ո՞ւր են մանկունք՝ առագաս տի ․
Զի ոչ հընչեն՝ զերգսըն Դաւթի ։
Օ խմբրդ յուսեալ՝ ո՛չ հարկանեն ․
Զփողըն հընչող՝ Տարսոնա ցի ։
Ո՞ւր պարարակ՝ եզն ամո լին ․
Զխմբրդ ՚ի քեզ՝ ո՛չ զենա նին ։
Կամ մատըռուակ՝ ըն բաժակ լին ․
Զի ո՛չ բաշխեն՝ զանոյշ գի նին ։
Ո՞ւր բարեկամք՝ ըն զուարճացեալ
Ընդ գլուխ որդւոյն՝ անուանա կի ։
Կամ տարածեալ՝ գիրկ Հայրենին
Առ ՚ի համբոյր՝ մեղաւո րին ։

Ո՜ւր քաղցր ձայնն՝ երաժըշտի ·
կամ գեղգեղումն՝ եղանա կի ։
Ո՞ւր ընթերցօղք՝ ըն սուրբ տառի
կամ վարդապետքն՝ ՚ի հանդի սի ։
Ո՞ւր է ամթոռ՝ հայրապե տի ·
կամ քահանայք՝ ՚ի սուրբ բեմբի ։
Ո՞ւր սարկաւագքն՝ որ ՚ի ասպասու ·
կամ պաշտօնեայք՝ պատարա գի ։
Ո՞ւր են խնկոցն ՚ի քեզ բուր մունք
Աներևոյթք՝ ճերմե լի ·
Կամ ժողովոց՝ ըն գումա րումն ·
Ցածուր տօնից՝ ըն տէրու նի ։
Ո՞ւր են դահոյք՝ թագաւո րի ·
Վաղարշապատ՝ քո քաղա քի ։
Կամ նախարարք՝ ըն արքա յի ·
Այրարատեան՝ ըղ գաւա ռի ։
Ո՞ւր են իշխանք՝ որ առա ջի ·
կամ նիզակիրքն՝ որ ըղէը նի ·

Ո՞ւր զօրականքն՝ յասպարի սի ·
կամ՝ լեգէոնքն՝ ՚ի ճակա տի ։
Ո՞ւր մեծամեծքն՝ ՚ի բազմո ցի ·
կամ՝ ո՞ւր սեղանն ամենա լի ։
Ո՞ւր են ազատքն՝ ՚ի տաճա րի ·
կամ՝ տեառնորդիքն՝ ՚ի ծաղկոցի ։
Ո՜հ բարձաւ՝ այս վաղա գոյն ·
Ցոյժ հեռացաւ՝ որ չերե ւի ։
Ո՜նուրջք երազք՝ էին յայտ նի ·
Արդ ծածկեցան՝ ՚ի յարթմը նի ։
Ո՜յլ փոխանակ՝ այսր ամե նի ·
Ցոյժ հակառակ՝ ըն տեսա նի ։
·Քանզի նատխ որք և այ րի ·
Տըխուր դիմօք զերթ ՚ի սը գի ։
Սան որոյ զքեզ՝ խակ կոչե ցի ·
Լինել սզակից՝ ինձ յայս վայրի ։
·Քանզի նըման՝ քոյն ցուցա նի ·
Իմոյս նորոգ՝ եղեալ չա րի ։

Որդ ուսուցես՝ ծմ սիրե   լի.
Եւ զինն ողբալ՝ ըստ արժա   նի։
Իբրու Հրմուտ լալեաց քա   նի.
Եւ քաջ տեղեակ՝ այրման սըրտի։



## ՆՇԱՆՔ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ ՀԱՅՈՑ։

### Եօթնագլխեան Վիշապ։

Օ՛ բազում արուեստին քաջութեան արարեալ՝ զազգս մեր բարձրացուցանողդ Տիգրան, սեպհականողդ մեզ զյաղթեղ Աշան զեօթնագլուխն Վիշապ՝ սպանեալ ընդ Աժդահակ. զարթիր զարթիր՝ զիմաստութիւն ունողդ մտաւոր, և կրող զսուր երկսայրի ՚ի բերան, և արա զի ոչ միայն՝ ոչ ողջասցի վէր մահու նորա, այլև՝ կենդանւոյն արկցի ՚ի լիճ հրոյն՝ այրեցելոյ ծծմբով։

### Արծուի։

Բարեկարգ գեղեցկութեամբ զԹագաւորութիւն և զհամայն

աշխարհս Հայոց՝ յօրինողք Արշակունիք, Արծուօրէն սլացմամբ ի մրցմունս մարտի՝ Պսակազարդ Պայծառացուցիչք Հայրենեաց, յաղթականաւ Մ՝ Խաղլեանի Արծուանշանն Դրօշակաւ փայլեցայք արդ է ժամ՝ ձայն տուք, և դիմեցէք իբրև զԱրծուիս՝ տարածեալ զԹևս ձեր՝ ի ժողովել զցրուեալս ի յոլորս տեղերայ ։

Պատկեր Փրկչական ։

Ցնծացող ի բանս Տէրունի և գտանող զանճառ սքանչելի ինքնանուէր Նախահաւատ Պանծալիդ Աբգար, որ ընկալեալ ի Տեառնէ զԹաշկինակն՝ ի նշան յատկի Աստուածավայելչուհ սիրոյ՝ ունող փրկչական Պատկերի,

զազգս Հայոց շքեղազարդեցեր . ցնծունս զխիստ մեր՝ բարձրացուցեալ զնշան՝ արմ նարդեանս և յապառանիս , զի ապրիցուք յերեսաց աղեղան ։

Գառն Աստուծոյ .

Նախաշաւիղ Լուսաւորդ Ճանապարհին՝ Հսկայազնդ Տըրդատ՝ ի ծննդեան Հոգւոյն Սրբոյ մկրտութբն Յովհաննէս հեզին Գառնըն վերածայնեալ , քաջայաղթ կատմալ ձօնմանց՝ Իշխանաւ Գառին՝ որ ի վերայ լերինն Սիոնի , Ազգիս մերոյ Թագաւորդ , զերկրպագուած զազանին՝ զկռոզմն դըրօշմինոյս ի ճակատ , տանջել առաջի Աստուծոյ և Գառին՝ Հանդերձաճորեմ . և զանուանս մեր ի

դպրութեան կենաց Գառինն զե-
նեցելոյ՝ գրել զու մաղթեմ ։

Առիւծ ։

Փոքրկացեալք ՚ի ցոյցս՝ և Անյաղթելի մեծամեծք ՚ի քաջա-րութիւնս՝ Երկառիւծք յանձնա-պատանք՝ Հզօրք քան զանա-սունս, տեսանօղք որդւոյս՝ Ռու-բենեանք, որոց առաջին Լեւոն յանուն Պանծացեալ, Պսակեալք ՚ի Կայսերաց՝ ըստ անուան Առիւ-ծանշան, արիք իբրեւառիւծք՝ ՚ի ցր-ուումն ամբարշտաց Թագաւորք Ի-մաստունք, որոցդ ՚ի յարուցա-նումն՝ ոչ ոք կարօղ, բայց թէ այն՝ որ ոչ ննջէ և ոչ ՚ի քուն եր-թայ Պահապանն Իսրայէլի.

Արարատ։

Ուրոյն Տեղէդ պանծանաց Լեառնդ Մասիս՝ յատկացոյն բընիկ Նշանդ՝ Արարատեան Թագաւորութեանս՝ Լեառնդ պարարտ և Լեռնանդ մածեալ, առմ ցլերինս՝ մեծամեծս՝ ցկանգնեալս առաջի քո, ընդունօղդ զհաճաստարութիւն շնորհացն, թէ ձեռք Օ օրարաբելի զհինն արկին Թագաւորազարդ Տանս այսմիկ, և ձեռք նորա՝ կանգնեցին զառ, զի դու ես Նօթնաչեայն՝ որ հայիս ընդ ամենայն երկիր։

ՎԵՐՋ.

Վ,Երջաբանութեան համառօտ, եւ գոհացողական
Բանին Երբեմնականն՝ առ Լուսանկար Մայրս
Մեր Սուրբ Էջմիածին ։

Արդ՝ սամ մեզ մայրդ լուսոյ՝ խորանդ իջեալ յերկնից եւ բնակեալ 'ի մէջ մարդկան. բնա՛ն Տեառն եւ տուն Աստուծոյ, եւ Աթոռ Լուսաւորչին մերոյ՝ քաղցրանուն սուրբ Էջմիածին, զի՞ է ցաւագին հառաչանքդ եւ աղիողորմ արտասուքդ կականալի ։ Մեք գիտեմք, զի 'ի սկզբանէ անտի անբախտութիւն երկուք՝ տիրեալք են քեզ. 'ի միոյ կողմանէ՝ արտաքին թշնամիք, եւ 'ի միւսոյ կողմանէ՝ ներքինք եւ հակառակորդք քո. ոմանք անհաւատութեամբք. եւ ոմանք մնասաւոր գիտմամբ եւ ատելից հակառակութեամբ ։ Բայց դու 'ի սկզբանէ անտի մինչեւ ցայսօր, երբեւ զվէմ անվանելի՝ հաստատուն կացեր 'ի վերայ վիմին ճշմարտութեան, որ ոչ դըռունք դժոխոց եւ ոչ բռնութիւնք հակառակորդաց՝ զքեզ յաղթահարել կարացին. այլ երբեւ զմրրիկ անցին զքեւ ։

Բայց արդ՝ դադարեցան նոքա, հուրն շիջաւ, զէնքն խորտակեցան եւ զօրութիւնք նոցա տկարացան. եւ դու ընդդէմ ցանկու-

թեանց նոցա և ակնկալութեանց, հանգի-ստացար ի վերայ նոցա.

Զի կերտողն քո՝ միածին Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս, յանկարծակի սաստեաց ալեաց և մրրկաց նոցա, և եղև խաղաղութիւն մեծ.

Իսկ արդ ուր եղան, ուր եղան նախնի հալածիչքն քո՝ ով լուսաւոր մայր մեր սուրբ Էջմիածին. Անցին նոքա իբրև զհեղեղ ջուրց՝ և ոչ են. խնդրեմք զտեղի նոցա, և ոչ գտանեմք. Աստուծոյ փառք, որ ըզնոսա մեք ոչ տեսաք, այլ զուրախալի զերեսս քո տեսանեմք.

Բայց ասա մեզ՝ իւ յաղթեցեր զնոսա. դու՝ որ ոչ ունիս, և ոչ սիրեցեր, և ոչ սուսեր և ոչ մի զէն.

Արդ տեսանեմք, զի դու յաղթեցեր ըզնոսա համբերութեամբ քով, ընկղմեցեր ըզնոսա արտասուօք քովք, և մարմնով քով դարձուցեր զնիզս նոցա, և արեամբ քով՝ շիջուցեր զհուր նոցա և խայտառակեցեր զնոսա երկարատև յուսով քով.

Խնդա՛ ուրեմն և դուարճացիր եկեղեցիդ Քրիստոսի, կոյս սուրբ տապան արքանեալ Ճշմարտութեամբ մեծ արա զարդարեան

քոյ ղուէր, և մերկեմ զհանդերձ ըկմանաց քոց, դադարեցո զլալդ, մեղմացո զաղաղակդ և բարձրացո իբրև զփողոյ զբարբառ քոյ, ընդ ամենայն ծագս երկրի. քանզի հիմունք քոյ հաստատեալ են 'ի վերայ անշարժ վիմին.

Իսկ՝ ես յետինս և կրտսերս 'ի զաւակս քոյ, սնեալս մաքուր կաթամբ քով՝ 'ի ձեռն ճշմարիտ փեսային քոյ՝ հոգելոյս Հայրապետին՝ մեծին Սիմէօնի, զգամ և ճանաչեմ զերախտիս քոյ, և մեծ առնեմ զբարերարութիւն քոյ՝ զանձն իմ կացուցանեմ 'ի հոգևոր մշակութիւն ծառայութեան քոյ. եմ և կալոց եմ 'ի հարազատ որդեական հնազանդութեան քոյ՝ մինչև ցվերջին կենաց իմոց՝ 'ի կէտ սահմանի իւրոյ. և հետևելոց եմ օգտի՝ 'ի քէն ծնեցեալ Հայկազունեաց Ազգի.

Աղաչեմ ուրեմն՝ զներօղ մայրութիւն քոյ ընկալ զգրաւ սրտիս և զպտուղ շրթանցս, և խառնեա զիս 'ի թիւս այնոցիկ՝ որք յաւիտենական սիրով սիրեցին զքեզ՝ առանց զղջման. Եւ մայրական գթութեամբ քով շնորհեա զքաւութիւն սխալանաց ամենայն յանցաւորաց քոց՝ Հայկազունեաց Ազգի. և արժանաւորեա զնոսա՝ դառնալ 'ի ստինս

սուրբ մայրութեան քոյ, և խառնիլ ի գունդս լուսածնունդ որդւոյ քոյ. ուստի և պայծառացեալ վերջնովքս՝ քան առաջնովքն, եղիցիս հաստատուն միշտ Սրբազնասուրբ փեսայիւդ. շնորհօք՝ զքեզ կնքողին Աստուծոյ. Ամէն:

Հանդիպօղքդ բանիս՝ յիշեցէք ի Քրիստոս զՍանահնեցի զՅովսէփ Արքեպիսկոպոս կողմանցս Հիւսիսոյ, և զնախնիսն իմ զԶաքարիա ամիր Սպասալարն Հայոց և Վ.րրաց. և զհանգուցեալ ծնօղսն իմ՝ զՇիօշբեկն զապանեալն յանօրինաց ի տարապարտուց. և զպարկեշտագնաց մայրն իմ զԲեթէվանն, և զվաղաթառամ զեղբարսն իմ զՄովսէս բէգն՝ և զՓարսադանն, և զքոյրն իմ զՄարիամն, և զկենդանի եղբայրն իմ զԻշխան պարոն Բէժանբեգն. և զեղբօրորդիսն իմ զԻշխանազուն զՇիօշն զՍօլօմօնն, Բեգ-Բարսեղն, զԶաքարիայն և զԴաւիթն, և զքոյրն իմ Թուսուտանն, և զայլ ազգականս իմ. որք ի հնումն կոչէաք Երկայնաբազուկք, և այժմ Արղութեանք. յիշօղքդ եղիջիք յիշեցեալք ի գթութիւնս Տեառն:

Ամէն:

Հոգւով ուրեմն յիշեսջիք ի Քրիստոս և զանարժան ծառայ ձեր զՄկրտիչ Ղուկաս Խօջամալեան Նոր Ջուղայեցի, որ յառաջագրեցի բաժանորդութեամբ վերատինտպագրել և անձամբ շարեցի զսա։ Յիշեսջիք և զհայր իմ զպարոն Ղուկաս Խօջամալեն, և զմայր իմ զԱւարդենին, զերէցեղբայր իմ զԿարապետ և զկրտսերն՝ զՍիմոն, և զքոյր իմ զՄայինն. և յիշողքդ յիշեսջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ՝ յաւուր շնորհաց և ողորմութեան Նորա, ԱՄԷՆ։

